ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «11» 05 2017թ. № 942-Ա

ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ ՃԱՆԱՉՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ, ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 12.2 կետի «ա» և «բ» ենթակետերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի թիվ 206-Ն որոշման 10-րդ, 11-րդ և 25-րդ կետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) էտալոնային լաբորատորիա ճանաչվելու համար ներկայացվող էլեկտրոնային հայտի ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) էտալոնային լաբորատորիայի ճանաչման վկայականի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Է. Տարասյանին:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2017 թ. 05.11
N 442-Ն հրամանի

ՀԱՅՏ

էտալոնային լաբորատորիա ճանաչվելու համար ներկայացվող

_____

(իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, բնակության վայրը)

_____

Խնդրում եմ փորձարկման լաբորատորիան որպես էտալոնային լաբորատորիա ճանաչել

_____

(նշել փորձարկման լաբորատորիայի չափումների (փորձարկումների) համար որպես էտալոնային լաբորատորիա ճանաչման ոլորտը/ոլորտները)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

Հայտատու՝ _____

(էլ. ստորագրություն)

_____

(անուն, ազգանուն)

_____ _____ 201 թ.

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

1. փորձարկման լաբորատորիայի ազգային և միջազգային հավատարմագրման վկայագրերի պատճեններ

2. հավատարմագրված միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող որակավորման ստուգման ամենամյա ծրագրին մասնակցության և դրական արդյունքների մասին անհրաժեշտ տեղեկատվություն (սերտիֆիկատ կամ այլ փաստաթղթեր)

3. չափումների (փորձարկումների) իրականացման հաստատված ընթացակարգ՝ (կլինիկական, տեխնիկական կամ այլ) էտալոնային նմուշների հետևելիության գրառումներով

4. հաստատված ընթացակարգ՝ էտալոնային և (կամ) աշխատանքային նմուշների պահպանման համար

5. չափման միջոցների տրամաչափարկման սերտիֆիկատի պատճեններ

6. կատարվող աշխատանքների հաշվառման համակարգով հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր

7. մեծությունների միավորների ելակետային արժեքների ներկայացման՝ լաբորատորիայի հայտարարագրված չափումների (փորձարկումների) ցանկ

8. չափումների (փորձարկումների) ընթացքում կիրառվող էտալոնային մեթոդների ցանկ

9. ծառայությունների մատուցման անհրաժեշտ մակարդակի մասին անհրաժեշտ տեղեկատվություն՝

9.1 տարածքային հագեցվածություն

9.2 մասնագիտական պատրաստվածություն (մասնագիտական կադրերի, ստանդարտ մեթոդներ/նոր մեթոդներ մշակելու և (կամ) գնահատելու համար համապատասխան տեխնիկական հմտություններ, վերապատրաստումների առկայությունը փաստող փաստաթղթերի պատճեններ)

9.3 տեխնիկական հագեցվածություն (սարքավորումների, ներառյալ՝ բարձր ճշգրտությամբ վերլուծական սարքավորումներ) մասին անհրաժեշտ տեղեկատվություն

Հավելված N 2
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2017 թ. 05.11
N 442-Ն հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷՏԱԼՈՆԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

N _____

Տրվել է _____ _____ 20 թ. Ուժի մեջ է մինչև ___ _____ 20 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ

_____

_____

(իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,բնակության վայրը)

_____

համապատասխանում է էտալոնային լաբորատորիա ճանաչվելու համար անհրաժեշտ չափանիշներին և իրավասու է իրականացնել չափումներ (փորձարկումներ) սույն վկայականի հավելվածում ամրագրված ոլորտներում:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ _____
(ստորագրությունը)

Կ.Տ.